# ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 63 - 64 (16968) ՇԱԲԱԹ 14 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԴԻԴԳՈՐԻ - 900

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԴԻԴԳՈՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՕՐԻՆԱԿԸ ՄԵԶ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է, ՈՐ ՄԻԱՍԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՍՆԵԼ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ»

*Օգոստոսի 12-ին Դիդգորիի հուշահամալիրում, Թբիլիսիից 30 կմ հեռավորության վրա, Մանգլիսիի մոտակայքում, մեծ շուքով նշվեց Աբխազ, Վրաց, Ռանի (Հերեթի), Կախիի եւ Հայոց թագավոր Դավիթ Չորրորդ Շինարարի կողմից 1121 թվականին թուրք-սելջուկների դեմ հաղթական մեծ ճակատամարտի 900-ամյակը:*

Միջոցառմանը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խոսելով Դիդգորիի ճակատամարտի նշանակության մասին, նշեց, որ 1121 թվականին Դիդգորիում ձեռք բերվեց նշանակալից հաղթանակ, է՛լ ավելի ամրացավ Վրաստանի միջազգային կարգավիճակը, ինչն ապահովեց երկրի վերջնական միավորումն ու դրեց Վրաստանը կովկասյան կայսրության վերածվելու հիմքերը, ինչն է՛լ ավելի ամրացավ ու հզորացավ Թամար թագուհու օրոք:

- Այսօր նշում ենք մեր պատմության ամենամեծ տարեդարձը: 900 տարի առաջ Վրաստանը, մեծն Դավիթ Շինարարի ղեկավարությամբ, ստեղծեց համաշխարհային պատմության ամենակարեւոր մարտա-ռազմավարական հաջողության օրինակներից մեկը,- ընդգծեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, մեր ժողովրդի համար Դիդգորիի «հզորության անհրաժեշտությունը» դարձել է ազատության, միասնության, հայրենիքին նվիրված պայքարի խորհրդանիշ:

- Նույնիսկ այսօր, նոր մարտահրավերների առջեւ, դա Դիդգորիի ճակատամարտի կենդանի օրինակն է, որը սովորեցնում է մեզ, որ միասին կա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

*Օգոստոսի 6-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անկացվեց Հայաստանի նոր կառավարության անդրանիկ նիստը: Նիստում Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ նոր ձեւավորված կառավարության առաջիկա անելիքներին:*

- Առաջիկայում պետք է զբաղվենք կառավարության ծրագրի եւ ծրագրի իրականացման միջոցառումների գործողությունների ցանկը հաստատելու գործով: Մեր ծրագիրը, բնականաբար, պիտի հենված լինի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրի, Հայաստանի վերափոխման՝ մինչեւ 2050 թվականի ռազմավարության վրա, ինչպես նաեւ նախընտրական քարոզարշավի ընթացքում ժողովրդի հետ երկխոսության ընթացքում ձեւավորված նախընտրական խոստումների վրա,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետի ելույթից հետո՝ գործադիրը անդրադարձավ օրակարգով սահմանված հարցերի քննարկմանը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

*Օգոստոսի 13-ին Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն՝ հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:*

Հանդիպմանը վարչապետը բարձր գնահատեց Գիորգի Սագանելիձեի ներդրումը հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության, միջպետական կապերի զարգացման գործում եւ հաջողություն մաղթեց հետագա գործունեության մեջ:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առկա է քաղաքական երկխոսության բարձր մակարդակ, ինչի մասին են վկայում վերջին շրջանում հաճախակիացած բարձրաստիճան պաշտոնական փոխայցերը:

Վարչապետի խոսքով, Հայաստանի կառավարությունը կարեւորում է բարեկամ Վրաստանի հետ քաղաքական, տնտեսական, մշակութային, հումանիտար, կրթական ոլորտներում փոխգործակցության խորացումը եւ պատրաստակամ է այսուհետ եւս շարունակել ակտիվ աշխատանքն այդ ուղղությամբ:

Հայաստանում Վրաստանի դեսպանը շնորհակալություն հայտնեց Նիկոլ Փաշինյանին գնահատանքի եւ համատեղ արդյունավետ աշխատանքի համար: Գիորգի Սագանելիձեն նշեց, որ Հայաստանից հեռանում է ջերմ տպավորություններով եւ կմնա Հայաստանի, հայ ժողովրդի լավ բարեկամը:

ՏԱՐԵԼԻՑ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Օգոստոսի 8-ին, 2008 թվականի օգոստոսյան պատերազմի 13-րդ տարելիցին, Վրաստանի իշխանության ներկայացուցիչները հարգանքի տուրք մատուցեցին օգոստոսյան պատերազմում զոհվածների հիշատակին:*

Մուխաթգվերդիի եղբայրական գերեզմանատանը զոհվածների շիրմին իրենց խոնարհումը բերեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն: Զոհվածներին հարգանքի տուրք մատուցեցին նաեւ Վրաստանի պաշտպանության նախարար Զուանշեր Բուրճուլաձեն, հաշտեցման եւ քաղաքացիական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

### ՔՈ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԲԱԶՈՒՄ ԵՆ ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՄԻԽԵԻԼ ՍԱՐՋՎԵԼԱՁԵ

Նախ, ողջունում եմ այս հիանալի թերթի՝ «Վրաստանի» ընթերցողներին, ովքեր բազում են ողջ Վրաստանում:

Ցանկանում եմ ի սրտե ողջունել թերթի 100-ամյակի առիթով, քանզի իրոք գնահատելի է այն մեծ ավանդը, որ թերթը ներդնում է Վրաստանի ազգությամբ հայ բնակիչների ոչ միայն ճշգրիտ տեղեկատվության հարցում, այլեւ միջմշակութային երկխոսության շնորհակալ գործում, ինչն արտակարգ նշանակալի հանգամանք է բազմազգ ցանկացած պետության իրականությունում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

### ՉԵՄ ՀԻՇՈՒՄ ՄԵԿ ՇԱԲԱԹ՝ ԱՌԱՆՑ «ՎՐԱՍՏԱՆԻ»

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մենք բազմանդամ ընտանիք էինք՝ տատ ու պապով, քույր ու եղբայրներով հարուստ: Ամեն մեկն իր նախասիրությամբ ու զբաղմունքով էր, բայց կար մեկը, որ մշտապես միավորում էր բոլորիս՝ մեծ թե փոքր, աղջիկ թե տղա: Գալիս էր ամեն շաբաթ ու իր միջոցով զարմանալու, ուրախանալու, գրագիտանալու, երբեմն նաեւ տխրելու առիթ տալիս: «Վրաստանն» ամռանը ծառի տակ, հով այգում էինք կարդում, ձմռանը՝ տաք վառարանի շուրջ... ի՞նչ ասեմ. որքան ինձ եմ հիշում, նույնքան՝ «Վրաստանը»:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

COVID - 19

## ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱԿ ԵԼՔՆ Է

### ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ը ԿԳՈՐԾԵՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

*Օգոստոսի 12-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի երթական նիստը, որտեղ քննարկվեցին կորոնավիրուսի համավարակի հետ կապված վերջին օրերի տագնապալի վիճակագրության, վարակի տարածումը կանխելու հետ կապված ձեռնարկվելիք միջոցառումների հարցը:*

Իր խոսքում Իրակլի Ղարիբաշվիլին, խոր մտահոգություն հայտնելով վեջին օրերին դեպքերի զարգացման կապակցությամբ, նշեց, որ որպես իրավիճակի կարգավորման միակ ելք, հնարավորության սահմաններում պետք է արագացնել պատվաստման գործընթացը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հավասարության պետական նախարար Թեա Ախվլեդիանին, Վրաստանում Ուկրաինայի դեսպան Իգոր Դոլգովը:

Հիշեցնենք, որ Ցխինվալիի տարածաշրջանի հակամարտության գոտում կրակի դադարեցման ռեժիմի խախտումները սկսվեցին դեռեւս 2008 թվականի հուլիսի վերջերից: Օգոստոսի առաջին օրերից Ռոկիի թունելի մոտակայքում մոբիլիզացված էին ռուսական 58-րդ բանակի ուժերը: Օգոստոսի 8-ից ինտենսիվ մարտեր սկսվեցին Վրաստանի զինված ուժերի եւ ռուսական կանոնավոր բանակի ստորաբաժանումների միջեւ:

Հաջորդ օրերին ռուսական ավիացիան ռմբակոծեց Վազիանիի եւ Սենակիի ռազմաբազաները, Մառնեուլիի ռազմական օդանավակայանը, Գորի քաղաքը, Փոթիի նավահանգիստը եւ Կոդորի կիրճը:

Օգոստոսի 11-12-ին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջնորդությամբ, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւն ու Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, Վրաստանում մարտական գործողությունների դադարեցման մասին՝ 6 կետից բաղկացած համաձայնագիր ստորագրեցին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ այս հինգ օրերին օսական կողմն ունեցել է 365 կորուստ, վրացական կողմը՝ 412: Զոհվել են նաեւ 67 ռուս խաղաղապահներ: Հարավային Օսեթիայի տարածքում գտնվող վրացական գյուղերի մոտ 80 հազար բնակիչ լքել են բնակավայրերն ու համալրել փախստականների եւ բռնի տեղահանվածների շարքերը:

Հնգօրյա պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչել է Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախությունը, Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ դիվանագիտական հարաբերությունները խզվել են:

ԴԻԴԳՈՐԻ - 900

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԴԻԴԳՈՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՕՐԻՆԱԿԸ ՄԵԶ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է, ՈՐ ՄԻԱՍԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՍՆԵԼ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

*ռող ենք հասնել բոլոր նպատակներին,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:*

*Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Դիդգորիի ճակատամարտը ողջ աշխարհին ցուցաբերեց Վրաստան պետության լիարժեքությունը, կայունությունն ու հզորությունը: Այդ ճակատամարտում Վրաստանը պարտության մատնեց ոչ միայն թուրքսելջուկներին, այլեւ՝ այդ ճակատամարտին մասնակցող ողջ մահմեդական կոալիցիային:*

*1121 թվականի օգոստոսի 12-ին տեղի ունեցած այդ ճակատամարտի նշանակությունն այնքան մեծ էր, որ դրա ընթացքը ներկայացվեց այն ժամանակվա բոլոր մատենագիրների կողմից: Մասնավորապես, այդ մասին գրել են հայ մատենագիր Մատթեւոս Ուռհայեցին, ֆրանսիացի Գոտուան, արաբ Ալ Փարեկը, Ալ Ջաուզը:*

*Ըստ Վրաստանի գիտությունների Ազգային ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս, պատմաբան Ռոին Մետրեւելու, այդ ճակատամարտի վերաբերյալ ամենահավաստի տեղեկատվությունը ներկայացվել է Մատթեւոս Ուռհայեցու աշխատությունում, ըստ որի՝ մահմեդական կոալիցիայի 300 հազարանոց բանակի դեմ Դավիթ Շինարարի գլխավորած 40 հազարանոց բանակում վրացիների հետ միասին մարտնչում էին հայեր, օսեր եւ երկրում ապրող այլ ազգերի ներկայացուցիչներ:*

*Տարեդարձի նշանավորման միջոցառմանը, Դիդգորիի ճակատամարտի 900-ամյակի կապակցությամբ, Վրացական բանակի մի շարք զինծառայողներ պարգեւատրվեցին վարչապետի նախաձեռնությամբ ստեղծված հատուկ մեդալով:*

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԱՐԴԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՇՈՒՐՋ 50 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 2-ին Վրաստանում կանցկացվեն տեղական ինքնակառավարման ընտրություններ: Գործող օրենսդրության համաձայն, նախընտրական քարոզարշավը մեկնարկեց օգոստոսի 3-ին, ընտրություններից 60 օր շուտ:***

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղի է ունեցել վիճակահանություն, որով հայտնի դարձան, թե որ կուսակցությունը, ինչ համարով է հանդես գալու առաջիկա ընտրություններում: Ընդհանուր առմամբ, տեղական ընտրություններին մասնակցության հայտ են ներկայացրել շուրջ 50 ընտրական սուբյեկտներ:

Գրանցված սուբյեկտների թվում են «Վրացական երազանքը» (ընտրահամարը՝ 41), «Միասնական ազգային շարժումը» (5), «Երրորդ ուժ»-նախկին՝ «Սրտատեգիա Աղմաշենեբելի» (1), «Եվրոպական Վրաստան. Շարժում՝ հանուն Ազատության» (2), Նինո Բուրջանաձե. «Միացյալ Վրաստան-ժողովրդավարական շարժում» (3), «Եվրոպական դեմոկրատներ» (6), Ալեկո Էլիսաշվիլի. «Քաղաքացիներ» (7), Դավիթ Թարխան-Մոուրավի, Իրմա Ինաշվիլի. «Վրաստանի հայրենասերների ալյանս» (8), «Լելոն՝ հանուն Վրաստանի» (9), Շալվա Նաթելաշվիլի. «Վրաստանի լեյբորիստական կուսակցություն» (10), «Վրաստանի հանրապետական կուսակցություն» (11), Գիորգի Գախարիա. «Վրաստանի համար» (25), Դավիթ Ճիճինաձե. «Տրիբունա» (35), «Գիրչի» (36), Զուրաբ Գիրչի Զափարիձե. «Գիրչի՝ ավելի շատ ազատություն» (45) եւ այլն:

# «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

***Օգոստոսի 2-ին «Վրացական երազանքը» ներկայացրեց Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորության թեկնածուներին:***

Ցուցակը ներկայացրեց Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախա Կալաձեն: Նրա խոսքով, «Վրացական երազանքը» Վակեի ընտրատարածքում առաջադրել է Գիորգի Տղեմալաձեի, Մթածմինդայի ընտրատարածքում՝ Զուրաբ Աբաշիձեի, Սամգորիի ընտրատարածքում՝ Ռեւազ Սոխաձեի, Իսանիի ընտրատարածքում՝ Կախա Լաբուչիձեի, Կրծանիսիի ընտրատարածքում՝ Լեւան Զափարիձեի, Նաձալադեւիի ընտրատարածքում՝ Իրակլի Խելաձեի, Գլդանիի ընտրատարածքում՝ Կոնստանտինե Զառնաձեի, Դիդուբեի ընտրատարածքում՝ Գիվի Չխարտիշվիլու, Սաբուրթալոյի ընտրատարածքում՝ Ավթանդիլ Ցինցաձեի, Չուղուրեթիի ընտրատարածքում՝ Զուրաբ Չիկվիլաձեի թեկնածությունները:

# «ԵՐԱԶԱՆՔԸ» ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐԵԼ Է ԾԱԼԿԱՅՈՒՄ՝ ԻԼԻԱ ՍԱԲԱՁԵԻ, ԲՈԼՆԻՍԻՈՒՄ՝ ԴԱՎԻԹ ՇԵՐԱԶԱԴԻՇՎԻԼՈՒ, ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ՝ ԿԵՆԱՆ ՕՄԱՐՈՎԻ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅՈՒՄ՝ ԳԻՈՐԳԻ ԾԻԿԼԱՈՒՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Օգոստոսի 10-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում ներկայացրեց քաղաքապետերի թեկնածուներին:***

Այսպես, Մառնեուլիի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնի համար «Վրացական երազանքը» ներկայացրեց Կենան Օմարովի թեկնածությունը, Բոլնիսիի մունիցիպալիտետում՝ Դավիթ Շերազադիշվիլու, Ծալկայի մունիցիպալիտետում՝ Իլիա Սաբաձեի, իսկ Թեթրիծղարոյի մունիցիպալիտետում՝ Գիորգի Ծիկլաուրու թեկնածությունը:

Քաղաքապետի թեկնածությունների ներկայացման շնորհանդեսներին ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան:

Ծալկայի մունիցիպալիտետում կայացած շնորհանդեսին, իր խոսքում Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ կենտրոնական իշխանությունը միշտ կանգնած կլինի բոլոր քաղաքապետարանների, տեղական իշխանության կողքին, որպեսզի ժամանակին լուծվեն բոլոր խնդիրները, որոնք կպահանջեն կենտրոնական կառավարության ներգրավումը:

- Ես՝ որպես վարչապետ, կառավարության ղեկավար, մենք՝ կենտրոնական կառավարությունը, հնարավորինս կկանգնենք բոլոր քաղաքապետարանների, տեղական իշխանությունների կողքին, ժամանակին կլուծենք բոլոր այն խնդիրները, որոնք պահանջում են կենտրոնական կառավարության ներգրավումը,- ասաց վարչապետը:



ԱՄՆ

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ

*ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենատը՝ 50 կողմ, 49 դեմ ձայներով հավանություն տվեց 2022 ֆինանսական տարվա (սկսվում է հոկտեմբերի 1-ին) բյուջետային առաջարկությունների փաթեթին՝ 3,5 տրիլիոն դոլարի չափով:*

*Օրինագիծը, մասնավորապես, նախատեսում է հարկային զիջողություններ այն արտադրողների համար, որոնք օգտագործում են էներգիայի մաքուր աղբյուրներ, բարձրագույն կրթություն սանալու հնարավորության հեշտացման ծրագրերի իրականացում:*

*Նախատեսված է առողջապահության, կրթության եւ շրջակա միջավայրի պահպանության ծախսերի ավելացում: Փաստաթղթի ընդունման օգտին քվեարկել են կառավարող Դեմոկրատական կուսակցության անդամները, դեմ՝ հանրապետականները:*

*Այժմ օրինագծերը պետք է քննարկի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը:*

ՀՈՒՆԱՍՏԱՆ

## ԱՆՆԱԽԱԴԵՊ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐ

*Հունաստանում արդեն մի քանի օր է, ինչ մոլեգնում են լայնածավալ հրդեհները. երկրի տարբեր շրջաններում բռնկվել է 586 հրդեհ: Երկրի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի խոսքով, վերջին օրերը երկրի համար ամենածանրերից մեկն են եղել վերջին տասնամյակներում:*

*- Մեր առջեւ աննախադեպ լայնածավալ տարերային աղետ է. մի քանի օրում Հունաստանի բոլոր անկյուններում 586 հրդեհ է բռնկվել: Այս հրդեհները, որոնք առաջացել են անոմալ շոգի ու երկար ամիսների երաշտից հետո, շատ դժվար է հանգցնել,- նշել է Կիրիակոս Միցոտակիսը:*

*Հունաստանի հրշեջ ծառայությունից հայտնել են, որ 10 հոգի ձերբակալվել է անտառներն ինչպես մտադրված, այնպես էլ՝ հանկարծակի հրկիզելու կասկածանքով:*

ՍԻՐԻԱ

## ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

*Օգոստոսի 10-ին, Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հաստատեց Արաբական Հանրապետության նոր կառավարության կազմը՝ Հուսեյն Առնուսի ղեկավարությամբ: Նախկին կառավարության կազմը, Առնուսի գլխավորությամբ, պետության ղեկավարը հաստատել էր անցյալ տարվա օգոստոսի 30-ին: Այդ կաբինետը մայիսի 26-ին Սիրիայում անցկացրել է նախագահական ընտրություններ, որտեղ Ասադն ստացել է ընտրողների 95,1 տոկոսի պաշտպանությունը: Հուլիսի 17-ին Սիրիայի ղեկավարը երդում է տվել որպես պետության ղեկավար չորրորդ յոթնամյա ժամկետով:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՋՐՀԵՂԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՆ ԶՈՀԵՐ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը օգոստոսի 13-ին գտնվում էր ջրհեղեղից մեծապես տուժած Կաստամոնու նահանգում: Էրդողանը, մասնավորապես, այցելեց Սեւ ծովի առափնյա Կաստամոնու նահանգի Բոզքուրթ շրջան, որտեղ մասնակցեց Արտակարգ իրավիճակների եւ տարերային աղետների վարչության (AFAD) համակարգող նիստին:*

*Թուրքիայի սեւծովյան առափնյա նահանգներում հորդառատ անձրեւների հետեւանքով առաջացած հեղեղումներից զոհվածների թիվն ավելացել է՝ հասնելով 27-ի: Ջրհեղեղի հետեւանքով զոհված 27 անձանցից 25-ը Կաստամոնու նահանգից են, իսկ 2-ը՝ Սինոպ նահանգից: Շարունակվում են Բարթինի նահանգից մեկ անհետ կորած անձին գտնելու որոնողական աշխատանքները:*

# Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

## ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

### ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ

***Օգոստոսի 9-ին կայացավ Վրաստանի կառավարության հերթական նիստը, որտեղ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ պետական ծառայողների աշխատավարձերը կբարձրանա 2022 թվականի հունվարից: Միաժամանակ, ըստ նրա, նախատեսվում է կրկնապատկել քաղաքապետերի աշխատավարձերը:***

Կառավարության ղեկավարի խոսքով, քաղաքացիական ծառայությունում աշխատող մարդիկ կբարձրացնեն իրենց մոտիվացիան՝ աշխատավարձը բարձրացնելով:

- Մենք մոտենում ենք ընտրություններին: Քաղաքապետերի աշխատավարձը կազմում է մոտ 1800-2000 լարի: Բացարձակապես դուրս է եւ անհամապատասխան այսօրվա իրականությանը: Պետական ծառայողների աշխատավարձը տարիների ընթացքում չի ավելացել, բացառությամբ՝ նախարարության մակարդակով տեղական որոշ որոշումների: Կառավարությանը միասնական տեսլական չի ներկայացվել: Մեր նոր քաղաքականության շրջանակներում՝ 2022 թվականի հունվարից աստիճանաբար կսկսենք բարձրացնել պետական ծառայողների աշխատավարձը: Սա անհրաժեշտ է, քանի որ պետական ծառայությունում աշխատող մարդիկ այլեւս չեն տեսնում մոտիվացիա, մենք չենք կարող մրցակցել մասնավոր հատվածի հետ, ուստի, անհրաժեշտ է անդրադառնալ այս խնդրին, ինչը մենք անպայման կանենք 2022 թվականի հունվարից, ինչպես նաեւ կբարձրացնենք քաղաքապետերի աշխատավարձը: Մենք որոշել ենք այն գործնականում կրկնապատկել: Քաղաքապետի համար աներեւակայելի է աշխատել 2000 լարիով եւ ծառայել Քութայիսիին ու Բաթումիին, դա աներեւակայելի է, եւ այս հարցը ժամանակին լուծման կարիք ունի,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵԼՈՒՅԹԻՑ

### «ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՎՐԱՅ ՀԱՋՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է»

***Օգոստոսի 9-ին, երկրի զարգացման 10-ամյա ծրագրի շրջանակներում, Վրաստանի արտաքին գործերի նախարարության առաջիկա 10 տարիների գործունեության ներկայացման շնորհանդեսին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խոսելով երկրի առջեւ ծառացած արտաքին մարտահրավերների, դրանց կարգավորմանն ուղղված միջոցառումների մասին, անդրադարձավ Վրաստանի միջնորդությամբ Ադրբեջանի կողմից 15 հայ գերիների ազատ արձակմանը:***

- Մեր հաջող քաղաքականության արդյունքն է, որ մեր միջնորդությամբ համաձայնության եկանք մեր եղբայրների՝ ադրբեջանցիների եւ հայերի հետ, ինչը հնարավորություն տվեց ազատել հայ գերիներին, ինչպես նաեւ ականապատ տարածքների քարտեզները հանձնել Ադրբեջանին,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով՝ Վրաստանի հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի հարեւանների հետ տարվող հաջող քաղաքականությունը:

- Մենք հրաշալի հարաբերություններ ունենք մեր երեք հարեւանների՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ Թուրքիայի հետ: Մեր հաջող քաղաքականության արդյունքներից վերջինն այն է, որ մեր միջնորդությամբ համաձայնության եկանք մեր ադրբեջանցի ու հայ եղբայրների հետ, ինչը հնարավորություն տվեց ազատել հայ գերիներին, ինչպես նաեւ ականապատ տարածքների քարտեզները փոխանցել Ադրբեջանին:

Սա հաջող նախադեպ է, որը մենք բոլորս միասին ենք ստեղծել՝ երեք հարեւան երկրները: Սա պետք է լինի մեր հիմնական ուղղություններից մեկը, որպեսզի Վրաստանը դառնա տարածաշրջանում խաղաղության եւ կայունության նախաձեռնողներից մեկը եւ հետագա զարգացման ամուր հիմքը: Այն հարթակը, որը մենք կարող ենք առաջարկել մեր բարեկամ եւ հարեւան երկրներին, պետք է զարգանան, եւ մենք պետք է ավելի ակտիվ լինենք այս ուղղությամբ,- ընդգծեց վարչապետը:

Հիշեցնենք, որ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիկերի ակտիվ մասնակցությամբ՝ ադրբեջանական կողմն ազատ է արձակել հակամարտության ընթացքում ձերբակալված Հայաստանի 15 քաղաքացիների, իսկ հայկական կողմից ականապատ տարածքների վերաբերյալ կարեւոր նյութեր են հանձնվել ադրբեջանական կողմին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

### ՕՐԵՆՍԴՐԸ ԿՔՆՆԱՐԿԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԴՐՈՇՆԵՐԸ ՎՆԱՍԵԼՈՒ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐՑԸ

***Վրաստանի խորհրդարանի քննարկմանն է ներկայացվել նոր օրինանախագիծ, ըստ որի՝ Վրաստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում ավելանում է հոդված, որի համաձայն՝ գործընկեր երկրների դրոշները վնասելու մեղադրանքով ֆիզիկական անձը կտուգանվի 1000 լարիով:***

Նույն արարքի կրկնությունը կհանգեցնի 2000 լարի տուգանքի կամ 15 օր ժամկետով վարչական կալանքի:

Օրինագծում նախատեսված փոփոխությունը ուժի մեջ կմտնի հրապարակումից 15 օր անց: Օրինագիծը հետադարձ գործողություն չի նախատեսում:

Օրինագծում նշվում է նաեւ, որ օրինագծի ընդունումը կօգնի կանխել Եվրամիության պաշտոնական խորհրդանիշի, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության կամ մեկ այլ միջազգային կազմակերպության պաշտոնական խորհրդանիշի կեղծումը, ինչպես նաեւ ազգային խորհրդանիշը այն երկրի հետ, որի հետ համագործակցում է Վրաստանը:

«Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ որպես օրենսդրական նախաձեռնություն ներկայացնում են պատգամավորներ Կախաբեր Կուճավան, Ալեքսանդր Էլիսաշվիլին, Ֆրիդոն Ինջիան, Խաթունա Սամնիձեն, Նիկոլոզ Սամխարաձեն եւ Բադրի Ջափարիձեն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

***Օգոստոսի 11-ին, Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին վերտուալ ծեւաչափով հանդիպում է Ասիական զարգացման բանկի (ADB) գործադիր տնօրեն Թոնի Մաքդոնալդի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ համագործակցության հարցեր:***

Ֆինանսների նախարարը շնորհակալություն հայտնեց ADB գործադիր տնօրենին՝ համաճարակի դեմ պայքարում Վրաստանին ցուցաբերած աջակցության համար:

Ինչպես հայտնի է, Վրաստանը Ասիական զարգացման բանկից ստացել է ավելի քան 92 միլիոն եվրո ֆինանսական միջոցներ՝ COVID-19 արտակարգ արձագանքման եւ ծախսերի աջակցության ծրագիրն իրականացնելու համար, որը կենսական կարեւորություն ուներ մակրոտնտեսական կայունության, նվազագույնի հասցնելու տնտեսական վնասը եւ աշխատատեղերի պահպանման համար: Բացի այդ, բյուջետային աջակցության տեսքով երկրին հատկացվել է 170,8 մլն եվրո:

Լաշա Խուցիշվիլին բանկի գործադիր տնօրենին տեղեկացրեց երկրի տնտեսության ներկա վիճակի մասին եւ նշեց, որ լավատեսական սցենարի համաձայն, այս տարի ՀՆԱ-ի աճը կարող է երկնիշ թվերի հասնել:

Հանդիպմանը շեշտվեց հետկովիդյան շրջանում տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների շարունակման կարեւորությունը:

«Ասիական զարգացման բանկը Վրաստանի կարեւոր գործընկերն է՝ դոնոր ֆինանսական հաստատություն, որի աջակցությամբ երկրում իրականացվում են քաղաքային ենթակառուցվածքների զարգացման կարեւոր ծրագրեր: Նաեւ հատկապես ուշագրավ է բանկի մասնակցությունը Արեւելք-Արեւմուտք արագընթաց մայրուղու եւ Հյուսիս-հարավ միջանցքի կառուցմանը»,- ասված է նախարարության հաղորդագրության մեջ:



### ՄԵԿՆԱՐԿԵՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

*Օգոստոսի 2-ին մեկնարկեց քաղաքացիների աշնանային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության համար եւ կշարունակվի մինչ 2021 թվականի դեկտեմբերի 25-ը: Համապատասխան բանաձեւը ստորագրել է երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:*

*Ըստ հրամանագրի, Վրաստանի Պաշտպանության նախարարության պահանջի համաձայն, Վրաստանի Պաշտպանության զորքերում զորակոչիկների առավելագույն թիվը սահմանվել է 1400, Հատուկ քրեակատարողական ծառայությունում՝ 684, ՆԳՆ-ի պահանջով, Նախարարությունում եւ Պետական պահպանության հատուկ ծառայությունում կծառայեն 1395 եւ 200 քաղաքացիներ:*

*Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիները 18-ից 27 տարեկան են, ովքեր իրավունք չունեն պահանջել զինվորական ծառայության հետաձգում կամ զինվորական ծառայությունից ազատում՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կանոնների համաձայն:*

### ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հրապարակեց պաշտոնական տեղեկատվություն Վրաստանի հանրային դպրոցներում աշխատող ուսուցիչների վերաբերյալ:*

*Համաձայն հաղորդագրության, 2021 թվականի հունիսի դրությամբ Վրաստանի հանրակրթական դպրոցներում աշխատում է 34 129 ավագ ուսուցիչ, 8 400 առաջատար ուսուցիչ եւ 308 մենթոր:*

*Ինչ վերաբերում է հոգեբաններին, ապա հանրակրթական դպրոցներում այս պահին կա 145 հոգեբան:*

### 52 ՏՈՆՆԱ ՀԻՎԱՆԴ ԿԱՐՏՈՖԻԼԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

*Վրաստանի ֆինանսների նախարարության հարկային ծառայությունը, 52 տոննա վարակված կարտոֆիլ է առգրավել վրաց-թուրքական սահմանային «Սարպի» մաքսակետում:*

*Մաքսատան աշխատակիցները ստուգման համար կանգնեցրել են կարտոֆիլով բեռնված երկու բեռնատար: Վերցված նմուշների լաբորատոր հետազոտության արդյունքում, Մաքսային դեպարտամենտի սանիտարական, ֆիտոսանիտարական եւ անասնաբուժական հսկողության բաժնի աշխատակիցները հայտնաբերել են կարանտինային վնասակար օրգանիզմներ:*

*Պարզվել է, որ կարտոֆիլը հիվանդ է: Վրաստանի կառավարության թիվ 463 որոշման համաձայն, նշված բեռը վերադարձվել է արտահանող երկրին՝ Թուրքիային:*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ԼԱՇԱ ԽՈՒՑԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ԲԱՐՁՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ Է»

***Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ մշակվում է երկրի զարգացման 10-ամյա ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում բոլոր գերատեսչությունները ներկայացնում են առաջիկա 10 տարիների իրենց գործունեության տեսլականը: Առաջիկա 10 տարիների գործունեության ծրագիրը ներկայացրեց նաեւ Վրաստանի ֆինանսների նախարարությունը:***

Ինչպես նշեց ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին, գլխավոր նպատակը բարձր տնտեսական աճն է:

Նրա խոսքով, առաջիկա տարիներին երկրի հիմնական խնդիրն է՝ հաղթահարել աղքատությունն ու գործազրկությունը, նվազեցնել սոցիալական անհավասարությունը, հասնել զբաղվածության բարձր մակարդակի եւ զգալիորեն բարձրացնել տնտեսական բարգավաճումը: Այդ նպատակներին հասնելու հիմնական երկարաժամկետ գործիքը բարձր տնտեսական աճն է:

- Վրաստանի տնտեսական աճը զգալիորեն կախված է տարածաշրջանի, ինչպես նաեւ համաշխարհային տնտեսական աճից: Արտաքին տնտեսական գործոնները դեռեւս ունեն մեծ ռիսկեր, ուստի մեր հիմնական շեշտը ներքին գործոնների հնարավորինս արդյունավետ օգտագործումն է եւ երկրի արտադրողականության բարձրացման արդյունքում ձեւավորված տնտեսական աճի հասնելը,- ասաց Լաշա Խուցիշվիլին:

Նրա խոսքով, նման տնտեսական աճը պահանջում է տնտեսական բարեփոխումների շարունակություն եւ մակրոտնտեսական կայունության պահպանում:

- Այս տարվա հունիսին Վրաստանի տնտեսությունն աճել է 18,7 տոկոսով: Կարեւոր աճը վերաբերում է ոչ միայն 2020-ին, այլեւ տնտեսությունը աճել է մոտ 9 տոկոսով 2019-ի նույն ժամանակահատվածի համեմատ: Կարեւոր է նշել, որ 2021 թվականի առաջին վեց ամիսներին Վրաստանի տնտեսությունն աճեց 12,7 տոկոսով, ինչը գործնականում հաստատում է մեր դրական սպասումը, որ այս տարի Վրաստանի տնտեսական աճը կլինի երկնիշ թվով,- նշեց ֆինանսների նախարարը:

Ինչպես հայտարարել է Լաշա Խուցիշվիլին, հունիսին տնտեսական աճին նպաստել են գործնականում բոլոր ոլորտները:

Ֆինանսների նախարարի հավաստմամբ, երկրի զարգացման համար անհրաժեշտ է պետական հատվածի աշխատավարձերը մոտեցնել մասնավոր հատվածի նույն որակավորում ունեցող աշխատակիցների աշխատավարձերին:

- Որակյալ ծառայողների աշխատավարձերի բարձրացումը չպետք է անընդհատ քաղաքականացվի, ուստի, օրենսդրական մակարդակով պետք է սահմանվեն որոշակի կանոններ. Բանաձեւ, որի համաձայն որակավորված պետական ծառայողների աշխատավարձերը կբարձրացվեն տարեկան կտրվածքով եւ կպահպանվի մրցունակությունը,- ասաց ֆինանսների նախարարը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ԵՐԵՔ ԵՎ ԱՎԵԼԻ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ԲԱՆԿԻՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԻՐԵՆՑ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

***Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, կառավարության հերթական նիստի ավարտից հետո, հայտարարեց, որ գործադիրը հավանություն է տվել «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի նոր փաթեթին:***

- «Արտադրի'ր Վրաստանում» ծրագիրը տարիների ընթացքում, հատկապես կորոնավիրուսի համավարակի պայմաններում, դարձել է փոքր եւ միջին գործարարության աջակցության արտակարգ հզոր լծակ,- հայտարարեց Նաթիա Թուրնավան եւ հավելեց, որ այժմ ծրագրին ավելանում են նոր կետեր, որոնք ներառված էին նաեւ գերատեսչության տասնամյա ծրագրում: Առաջին նոր ենթածրագիրը սուբսիդավորվող վարկերն են, որը կվերաբերի յուրաքանչյուր ընտանիքին, որի տանը սեպտեմբերի 1-ից հետո կծնվի նորածին:

- Նորածնի ծնվելուց 12 ամսվա ընթացքում՝ նման ընտանիքը կարող է դիմել բանկ, վերցնել հիպոթեքային վարկ եւ գնել լրացուցիչ նոր բնակարան, տուն, կհամաֆինանսավորվի 200 հազար լարիի չափով, իսկ առաջին կամ երկրորդ երեխա ունեցող ընտանիքներին, բանկը կհամաֆինանսավորի գրեթե կեսը: Օրինակ, եթե այսօր հիպոթեքային վարկը վերցնում են 12%-ով, ապա դրա 6%-ը կվճարի պետությունը, սակայն, եթե խոսքը վերաբերում է երրորդ, չորրորդ եւ հաջորդող յուրաքանչյուր երեխայի պարագայում համաֆինանսավորումը շատ ավելի բարձր է, մոտ՝ 8%: Սա նշանակում է, որ այսօր նման ընտանիքները կարող են հիպոթեքային վարկ վերցնել 4%-ով, որպեսզի բարելավեն կենսապայմանները եւ ստանան հինգ տարի ժամկետով համաֆինանսավորում:

Երկրորդ կատեգորիայի համաֆինանսավորման ծրագրում կհայտնվեն այն ընտանիքները, որոնք այսօր ունեն երեք կամ ավելի երեխա, այսինքն, բազմազավակ ընտանիքներ են, որոնք ինքնաբերաբար կկարողանան օգտվել այս ծրագրից, այսինքն՝ առանց ընտանեկան անդամի համալրման: Նրանք, ովքեր ունեն երեք կամ ավելի երեխա, սեպտեմբերի 1-ից, 12 ամսվա ընթացքում, կարող են դիմել բանկային հաստատություն՝ բարելավելով իրենց կենսապայմանները, գնել նոր բնակելի տարածք, եւ այս պարագայում էլ մենք կսուբսիդավորենք բանկի տոկոսների մոտ 2/3-ը:

Հույս ենք հայտնում, որ այս ծրագիրը մեծապես կնպաստի մեր ընտանիքների բարեկեցությանը, կբարելավի կենսապայմանները, եւ յուրաքանչյուր նոր երեխայի ծնունդ յուրաքանչյուր ընտանիքում, ոչ միայն մեծ ուրախություն կբերի, այլեւ՝ կոնկրետ, գործնական օգուտներ,- ասաց Նաթիա Թուրնավան:

«Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի՝ կառավարության կողմից հավանության արժանացած փաթեթում առավելագույնս նախատեսված են նաեւ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կարիքները:

Մասնավորապես, փաթեթը ենթադրում է ինչպես պարտավորություններ, այնպես էլ՝ ապագա շահառուների համար խրախուսման մեխանիզմներ, որպեսզի իրենց բիզնես-ծրագրերը հնարավորինս հարմարեցվեն սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար, ինչպես նաեւ՝ ընտրության գործընթացում հավասար որակավորում ունեցող թեկնածուներից նախապատվությունը տալ հաշմանդամություն ունեցող անձանց:

## ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

### Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՕԳՏՎԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՒՅՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ

***Վրաստանում բազմազավակ կամ նորածին ունեցող ընտանիքների համար հիպոթեքային վարկերի սուբսիդավորման ծրագիրը կսկսվի սեպտեմբերի 1-ից:***

Վարկի գումարը կկազմի 200 հազար լարի, եւ պետությունը կհամաֆինանսավորի այն՝ 5 տարի ժամկետով: Նորածին ունեցող ընտանիքների համար համաֆինանսավորումը կկազմի վարկի տոկոսադրույքի կեսը, իսկ բազմազավակ ընտանիքների համար՝ 2/3-ը:

Ինչ վերաբերում է չափորոշիչներին, ինչպես նշված է կառավարության հաստատած ծրագրում, սուբսիդավորումից կարող են օգտվել.

* Ընտանիքը/միայնակ ծնողը/այրին, եթե վարկ ստանալու պահին ունի մինչեւ մեկ տարեկան երեխա, որը ծնվել է 2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո:

* Ընտանիքը/միայնակ ծնողը/այրին, եթե վարկ ստանալու պահին ունի 3 կամ ավելի երեխա եւ այս ծրագրի շրջանակներում վարկ կվերցնի 2022 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

* Ընտանիքը/միայնակ ծնողը/այրին, որը որդեգրել է երեխա՝ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո:

Ինչպես բացատրվում է որոշման մեջ, ծրագրի նպատակի համար երեխա է համարվում միայն անչափահաս երեխան/որդեգրված երեխան:

ՀԱՐՑՈՒՄ

## «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՐԿԻՆ ՎՍՏԱՀՈՐԵՆ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ Է ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

NDI
NATIONAL DEMOCRATIC INSTITUTE

***Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) հրապարակեց հուլիսի 13-25-ին՝ հիմնվելով Վրաստանի ողջ տարածքում 2 016 հեռախոսային հարցազրույցների ներկայացուցչական ընտրության վրա՝ երկրի չափահաս բնակչության շրջանում (բացառությամբ՝ օկուպացված տարածքների) անցկացված հարցման արդյունքները: Հարցման սխալի միջին սահմանը +/- 1.3 տոկոս է: Հարցվողները ընտրվել են պատահականորեն:***

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԵԿՏՈՐԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 76 տոկոսը նշել է, որ Եվրամիության անդամակցությունն ընդունելի է, 11 տոկոսը անընդունելի է համարում, իսկ 13 տոկոսը՝ չգիտի:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին անդամակցությանը, հարցին, թե ընդունելի՞ է արդյոք Վրաստանի կառավարության հայտարարած նպատակը՝ Վրաստանը դառնա ՆԱՏՕ-ի անդամ, հարցվածների 74 տոկոսը կարծում է, որ դա ընդունելի է, 11 տոկոսը՝ անընդունելի, մինչդեռ 14 տոկոսը չգիտի:

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՌԱՎԵԼ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է

NDI-ի հարցաթերթիկի հարցերից մեկը վերաբերում էր քաղաքական կուսակցությունների նկատմամբ դիրքորոշմանը: Հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 51 տոկոսի հավաստմամբ, քաղաքական եւ ոչ մի կուսակցություն իր համար ընդունելի չէ: 18 տոկոսի համար առավել ընդունելի է «Վրացական երազանքը», մյուս կուսակցությունները, այդ թվում՝ նաեւ «Ազգային շարժումը» ընդունելի է համարել հարցման ենթարկվածների ընդամենը 6 տոկոսը:

Նշենք, որ այդ թեմայով հարցման ենթարկվածների միայն 30 տոկոսն է նշել կոնկրետ կուսակցությունը:

### ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԲԱՐՁՐ ԳՆԵՐԸ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի հարցման արդյունքներով, բնակչության համար գլխավոր հիմնախնդիրը գործազրկությունն է: Նման կարծիքի է հարցման ենթարկվածների 59 տոկոսը: 42 տոկոսի հավաստմամբ, էկոնոմիկայի գլխավոր հիմնախնդիրը գնաճն է եւ լարիի արժեզրկումը, 19 տոկոսը՝ կարեւորագույն է համարում աղքատությունը, 16 տոկոսը գտնում է, որ գլխավոր հիմնախնդիրը ցածր աշխատավարձն է, իսկ 12 տոկոսի պնդմամբ, դա բարձր հարկերն են:

Հատկանշական է, որ հարցման ենթարկվածների 56 տոկոսը որպես առաջնային հիմնախնդիր համարում է դեղորայքի բարձր գները, 25 տոկոսի պնդմամբ, բարձր են նաեւ բժշկական սպասարկումների սակագները:

### 35 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի հարցաթերթիկի թեմաներից մեկն առնչվում էր կորոնավիրուսի համավարակին: Հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 47 տոկոսը հայտարարել է, որ կտրականապես դեմ է պատվաստմանը, 35 տոկոսը հավաստիացրել է, որ անվերապահորեն պատվաստվելու է, 7 տոկոսը նշել է, որ արդեն պատվաստվել է:

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հարցման արդյունքների, 53 տոկոսը բարձր է գնահատել Վրաստանի կառավարության կորոնահամավարակի հաղթահարմանն ուղղված գործողությունները: 37 տոկոսը համարում է, որ կառավարությունը վատ է գործում, մինչդեռ հարցվածների 10 տոկոսը չգիտի հարցի պատասխանը:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ*